

Էրիստոնեսայ ԱՅԱՍՏԱՆ

1999, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (49)

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԼՐԱՏՈՒ

1700-ԱՍՅԱԿԻ ԾՐԱԳՐԵՐԸ
ԳԱՌՆՈՒՄ ԵՆ ՄԱՍԱՅԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԻ
ԳԻՏԱԿՑՄԱՆ
ԿԱՐԵԿՈՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿՐՈՆ ԳԱՍԱՎԱՆԴՈՂ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՆՈՐ ԼՍԱՐԱՆ
ԹԱԼԻՆՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱՏԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՅԱԿԱՆ ԵՐԿՆԱԲԱՐԱԹԵՐՈ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԳԱՐԵԳՐԵՆ Ա ՎԵՐԱՓԱՌ ՋԱՅՐԱՊԵՏԻ «... ԵՒ ՕՐՈՐՎՈՒՄ Է ՆԱԿԸ ԱԼԻՔՆԵՐԻ ՎՐԱ» ԳԻՐՔԸ

Վերջերս ԱՄՆ-ում Նյու Յորքում, լույս տեսավ Ն. Օ. Ս. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի «...Եւ օրորվում է նավը այրերի վրա» էստեների անգլերեն ժողովածու՝ Հայ Առաքելական Եկեղեցու Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արք. Պարսամյանի տնօրինությամբ եւ Քրիստափոր Հ. Ջաքյանի խմբագրությամբ։ Ժողովածուն լույս տեսավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնադրման 50-ամյա հոբելյանի, ինչպես նաեւ Հայաստանում քրիստոնեությունը՝ որպէս պետական կրոն հռչակման 1700-ամյա հոբելյանի առթիւ։

Նորին Սրբություն Վեհափառ Հայրապետի հոգեւոր սպասավորության ժամանակաշրջանը գործնականում գրեթե համընկել է ԵՀԽ-ի հիմնադրման եւ դրանից ի վեր ծավալած գործունեության ժամանակաշրջանի հետ, եւ պատահական չէ, որ նրա ելույթները տարբեր էկումենիկ ֆորումների ժամանակ հիացնում են իրենց դիմաւորման եւ պարզությամբ։

Եթե ուշադրություն դարձնենք գրքի ենթավերնագրին՝ «Ճեպագրեր»՝ արված էկումենիկ ճանապարհորդության ընթացքում», ապա սույն ժողովածուում ընդգրկված էստեները, իրոք, ըստ ժամանակագրական կարգի, գրի են առնում մի էկումենիկ ճանապարհորդություն՝ երկու իմաստով. մի կողմից դրանք ակնհայտորեն հաջորդում են վերջին տասնամյակների ընթացքում ԵՀԽ-ի իրադարձություններին ու շարժումներին, մյուս կողմից՝ ուրվագծում Վեհափառ Հայրապետի անցած ուղին՝ սկսած բախակալական ձեռնարկություններից մինչեւ գահակալության շրջանը Ամրիկայում եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինում։

Էստեները, բացառությամբ առաջինի, գրքում ներկայացված են ըստ ժամանակագրական կարգի եւ համառոտ, սակայն բովանդակային կերպով մեկնաբանված են առաջադարձ հեղինակ Քրիստափոր Հ. Ջաքյանի կողմից։

Առաջին էստեն «ԵՀԽ-ն իր նոր տարողության մեջ եւ Ուղղափառ Եկեղեցիները», հոդ է նախապատրաստում սույն ժողովածուի հիմնահարցի ուսումնասիրման համար. այն է՝ ԵՀԽ-ի զարգացող, ծավալվող գործունեության շրջանակները եւ Ուղղափառ Եկեղեցիների տեղը խորհրդում։ Ստանձնելով միջնորդի դեր՝ Վեհափառ Հայրապետը թե՛ խորհրդին եւ թե՛ Ուղղափառ Եկեղեցիների հորդորել է գնահատել եւ ճանաչել իրենց

ստացած եւ իրենց մատուցած օգուտները։ Ու թեւ այն գրված է ավելի քան 20 տարի առաջ՝ 1978 թվականին, դրանում արժարժված թեման առ այսօր արդիական է։

Երկրորդ մյուսը՝ «Էկումենիկ հիմնահարցը Բյուզանդական քրիստոնեության մեջ» (1959 թ.), ամենից վաղ գրված աշխատությունն է։ Նրանում 27-ամյա Գարեգին արքեպ. Մարգարյանը վերլուծում է 5-րդ դարում տեղի ունեցած Եկեղեցու պառակտման երևույթը։

«Քրիստոսի անձի վարդապետությունը Հայ Եկեղեցում» (1964 թ.) հոդվածում արդեն Գարեգին եպիսկոպոս Մարգարյանը գտնում է, որ Եկեղեցիների միջեւ բացահայտ տարածադրություններն ու վեճերը կարելի է հաղթահարել՝ հրավիրելով հիմնավորել էկումենիկ ժողովների համարժեք ժամանակակից մի մարմին։

«Նորեկ եկեղեցիների քաղաքական պատասխանատվության շուրջ» (1967 թ.) էստեն հակիրճ խոսելով Եկեղեցու եւ հասարակության շուրջ 1966 թ. հրավիրված համաշխարհային կոնֆերանսի մասին՝ Գարեգին եպիսկոպոս Մարգարյանը մատնանշում է աճող քաղաքական երկճյուղավորումը էկումենիկ շարժման մեջ եւ վարդապետը նախագրող շարժումն էՀԽ-ի ներսում վերահաս ճգնաժամի մասին։


«Քրիստոնյա Եկեղեցիները եւ պաշտամունքի փախստականների հիմնահարցը» (1970 թ.) հոդվածում հեղինակը պնդում է, որ ԵՀԽ-ն կարող է եւ պետք է արդյունավետ դեր կատարի միջազգային թատերաբեմում, եւ մատնանշում է Եկեղեցիների գործունեության որոշ ուղղություններ՝ մարդասիրական օգնության ու օժանդակության ապահովում, հակամարտող կողմերի միջեւ միջնորդ գործունեություն, մարդու իրավունքների պաշտպանություն։

Հաջորդ մյուսները հետևյալ վերնագրերն են կրում՝ «Ամենայնեկությունից խոնարհություն՝ բարեկամության մեջ» (1972 թ.), «Կյանք ի Քրիստոս մաշակման ի համբերության միջով» (1982 թ.), «Իմբերսոնալ իդեալ առհեմ» (1997 թ.), «Էկումենիկ փառուները Հայ Եկեղեցում» (1998 թ.)։

Վերջին երկու էստեներում Վեհափառ Հայրապետին տեսնում ենք արդեն որպես հովվապետ՝ եկեղեցական կյանքի ճակատային գծում, Եկեղեցու գործում առաջնորդ եւ ապա ավելի լայն շարժման առաջնորդ։ «Էկումենիկ մարտահրավերն Արեւելյան եկրո-

պայում» (1998 թ.) էստեն Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս որպես իր հոսք գառն մտքի հազար գայլերից պաշտպանող աշակերտ, գգոն հովիվ։ Խորհրդային Միության փլուզումը, իր եւ այլ ժողովուրդների ազատությունը բերելու հետ միասին, ուղեկցվեց նաեւ այդ երկրներ «քրիստոնյա եւ կեղծ-քրիստոնյա» աղանդների ներխուժմամբ։ Ահա հենց այդ աղանդներն են այսօր «Էկումենիկ մարտահրավեր» հանդիսանում։

Վերջաբան հանդիսացող «Նորեկ Հայաստանի» դեպի քրիստոնեություն դարձի 1700-ամյա հոբելյանի շուրջ» (1998 թ.) էստենում դրսևորվում է Գարեգին կարդողիկոսի հովվապետական գործունեության մյուս կողմը։ Առաջնորդելով



իր հոսք դեպի նրա կյանքի ուղեմիջ հանդիսացող այդ հոբելյանը՝ Նորին Սրբությունը հրավիրում է ողջ աշխարհի բարեկամ քրիստոնյաներին՝ մասնակցելու դրան ոչ թե որպես հանդիսատեսներ, այլ որպես մասնակիցներ՝ տոնելու քրիստոնեության ընդհանուր պատմության մեջ երջանիկ մի իրադարձություն։ Նրա եզրափակիչ բառերը՝ ուղղված թե՛ էկումենիկ շարժմանը եւ թե՛ իր ժողովրդին, կարող են նշանաբան հանդիսանալ Գարեգին կարդողիկոսի ամբողջ առաքելության համար։

Վեհափառ Հայրապետի ժողովածուի մեջ ընդգրկված աշխատությունները ջուր չեն տալիս, թե հիմնավոր քրիստոնեական մի Եկեղեցի ինչպե՞ս կարող է իմաստություն հաղորդել եւ առաջնորդել ժամանակակից էկումենիկ շարժումը։

Ըստ առաջաբանի
նյութը պարզապես
Լարիսա ՆԱԿԱՍՏԱՆԸ

ՔՈՒԼՂԱՐԻՒՅՑԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՔ. ԷՋՄԻԱՏԵՐՆ

Մարտի 6-ին Մայր Աթոռ Սրբ. Էջմիածին այցելեց Բուլղարիայի Ժողովրդական Ժողովի նախագահ Յորդան Մոկուլովի գլխավորած պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանի ուղեկցությամբ։

Հանուն Ամենայն Հայոց Գարեգին Ա կարդողիկոսի ողջունելով հյուրերին՝ կարդողիկոսական ընդհանուր փոխանորդ Ս. Գարեգին արք. Ներսիսյանը նշեց, որ հայ երուրդար ժողովուրդների բարեկամությունը դարավոր պատմություն ունի, իսկ Հայ Առաքելական Եկեղեցին՝ որպես Ուղղափառ եկեղեցի, սերտ կապեր ունի բուլղար Օրթոդոքս Եկեղեցու հետ։

Հանդիպման ընթացքում խոսվեց երկու երկրներում հոգեւոր եկեղեցական կյանքի, հոգեւոր վե-

րագարքների մասին, կարեւորվեցին եկեղեցի-պետություն սերտ հարաբերությունների անհրաժեշտությունն ու Եկեղեցու դերն ազգի միասնականության պահպանման գործում։ Ձրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաեւ աղանդների տարածման խնդրին։

Նշելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին միշտ կանգնած է եղել պետականության կողքին՝ սրբազան հայրը միաժամանակ իր գոհունակությունը հայտնեց պետության կողմից հասարակական կյանքում Եկեղեցու դերի կարեւորման անուշուրյանը։

Հանդիպման ավարտին փոխանակվեցին նվերներ։ Սրբազան հոր ուղեկցությամբ՝ հյուրերը շրջեցին Վեհափառի բանգարանում։

ՄԱՍՈ ԳԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆ ԳԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԳԱՍԱՐԱՍՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Փետրվարի 25-ին Մայր Աթոռ Սրբ. Էջմիածին ԶԴ-ԶԿ-ի գրասենյակում կայացավ քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների պատրաստման լսարաններում դասավանդող դասախոսների խորհրդակցություն՝ նախագահությամբ ԶԴ-ԶԿ-ի վարիչ-տնօրեն Ս. Վագգեն վրդ. Միրզախանյանը։ Ներկա էին Մայր Աթոռի միաբաններ Ս. Աշոտ արք. Մնացականյանը, Ս. Արշակ արք. Խաչատրյանը, Ս. Արշակ վրդ. Սանոսյանը, քահանայապետներից՝ Ս. Արսեն ավագ ք. Իմանյանը, թեմերից՝ Ս. Արսեն ավագ ք. Մարգարյանը, Ս. Սիմոն ք. Սաֆարյանը (Կոտայք), Ս. Սյուրիք ք. Երանյանը, Ս. Հայկազուն ք. Մկրտչյանը (Արագածոտն), Ս. Մարտիրոս ք. Ավետիսյանը (Սյունիք) եւ Վահան սրկ. Ջաքյանը։

Ժողովի սկզբում ԶԴ-ԶԿ-ի վարիչ-տնօրենը, ողջունելով ներկայից իր նախնիներին, անդրադարձավ յուրաքանչյուրի կատարած աշխատանքին եւ բարձր գնահատեց նրանց ծառայությունը քրիստոնեական դասավանդության մասին ասպարեզում։ Ապա հայր սուրբը, կարեւորելով կրոնի ուսուցիչների պատրաստման գործը, նշեց, որ հայ մանուկների քրիստոնեական դաստիարակության ապագա գործընթացը սաղմնավորվում է այսօր՝ ներկա ուսուցիչներում, որոնք գործում են Կոտայքի թեմի՝ Արսենյան եւ Հրազդան, Գուգարաց թեմի՝ Վանաձոր, Արագածոտնի թեմի՝ Աշտարակ, Սյունյաց թեմի՝ Եղեգնաձոր քահապետներում։

Խորհրդակցության ընթացքում բնագրվեցին առարկաների դասավանդման արդյունավետ կազմակերպման մեթոդական խնդիրներ, լսարանների ունեցողիների շրջանում՝ թե՛ դասապրոցետում, թե՛ դրանից դուրս, հոգեւոր կյանքը ապահովելու, նրանց եկեղեցամասկան կյանքին մասնակցելու հարմարությունները եւ համայնքների ակտիվ անդամներ դարձնելու հարցեր։

Առաջարկություններ եղան թեմերում քարոզչական գրասենյակներին ձեւավորման, դասավանդվող առարկաների ծրագրերի կատարելագործման, լսարաններում հավելյալ սեմինար պարապմունքների եւ ունեցողիների մասնակցությամբ քարոզչական միջոցառումների կազմակերպման վերաբերյալ։ Խորհրդակցության մասնակիցները, ընդգծելով կատարվող աշխատանքի խիստ կարեւորությունը, նշեցին, որ արդեն այսօր նախկին լսարանների շրջանավարտները գործում մասնակցություն են ունենում Մայր Աթոռի կողմից նախաձեռնվող քարոզչական եւ այլ միջոցառումներին։

Եզրավանկելով խորհրդակցությունը Ս. Վագգեն վրդ. Միրզախանյանը առաջադրեց, որ առաջիկա երեք ամսում լսարաններում՝ յուրաքանչյուր առարկայից անցկացվեն ստուգաթղթեր, եւ տեղեկացրեց, որ հաջորդ հանդիպումը կկայանա հունիսի սկզբին՝ ամփոփելու համար ուսումնական տարեշրջանի արդյունքները։

ԶԴ-ԶԿ-ի լրագրական բաժին

ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԽՈՎԱՆԸ ԺԱՄ Տ. ՀՈՎՆԱՆ
ԱՐՔԵՊՍ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՀԵՏ

Ինչպես յուրաքանչյուր ուրբաթ, այնպես էլ փետրվարի 5-ին՝ ժամը 21-ին, Մայր տաճարում խոկման ժամ էր։ Խոկմանը Մայր Աթոռի միաբանները, ճեմարանի սաները հավաքվում են միասիրտ, միատեղ՝ առանձնակի աղոթելու, խորհելու, խոկելու, կրկին անգամ մի հայաքց գգնելու անցած շաբաթվա դեպքերին։

Մակայն փետրվարի 5-ն արտասովոր էր, քանզի խոկման ժամանակ ներկաների համար խոսեց Կանադայի բեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիս. Տերտերյանը։ Սրբազան հայրն այն երախտավորներին է, որի աշխից երբեմն չի վրիպել ճեմարանը եւ Մայր Աթոռում եղած ժամանակ անպայման հանդիպել է ճեմարանցիների հետ։

Տաճարում քարոզի մյուսը Երուսաղեմի պատրիարք Տ. Թորգոմ արքեպիս. Գուշակյանցի վերցված հետելայլ միտքն էր. «Մարդիկ մնան են անորմերի։ Կան ապալուց, արծաթից, ոսկուց անորմեր, բայց կարեւոր է, թե ինչ մյուսին են դրանք, կարեւորը դրանց կիրառությունն է։ Մարդիկ մնան են անորմերի, կարեւոր է ինչ որանց դիրքը, առավել կարեւոր է, թե նրանք ինչ ծառայություն են մատուցում, ինչպես է նրանց միջոցով անցնում Աստծու խոսքը...»։

Հավարտ քարոզի՝ բոլորը, գլխավորությամբ սրբազան հոր, ծնկար անողներին Նորին Սուրբ Օծնություն Տ. Տ. Գաբրիել Ա կաթողիկոսի առողջության, ազգի բարորության ու նորանոր հաջողությունների համար։

ՎԱՐԿԱՆՆԵՑ ՏՈՒՆԻ ՆԿԻՐՎԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 11-ին՝ Վարդանան տոնի օրը, Մայր տաճարում մատուցված Սուրբ Դատարանով մեկ անգամ են հավերժացվեց հայրենասեր հերոսների հիշատակը։ Սուրբ Կատարագին հետո՝ ժամը 13-ին, ճեմարանում տեղի ունեցավ հանդիսություն՝ ի հիշատակ Վարդանանց, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանության անդամները՝ բարձրաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողոսյանի գլխավորությամբ, ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողները։ Մայր Աթոռի պաշտոններում եւ հրավիրվածներ։

Հանդիսությունն սկսվեց Տերուհական աղոթքով, այնուհետեւ հնչեցին ՀՀ պատկանակ հիմքի եւ ճեմարանի քայլերը։ Բացման խոսքով հանդես եկավ Գեորգյան հոգևոր ճեմարանի փոխտնօրէն Տ. Բարկեյան արքեպիս Մարիաբանը։ Հայր տառի խոսքից հետո՝ Տ. Ներսես Շողոմայու «Նորահրաշ» անգուգակյան շաբաթակի երգեցողությունը, որին հետո «Վարդանանց պատերազմի դասերը» թեմայով հանդես եկավ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը։ Այնուհետեւ երգչախումբ կատարեց Մակար Եկմանյանի «Երգ մեծնող հայրենասերի» հրաշալի գործը։ Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդաբանան» բանաստեղծությունը կարդաց Արման Սիմոնյանը։ Կոմիտասի «Կուռմուկ» ստեղծագործությունը դաշնամուրով եւ ջութակով մկանգեցին Ա լսարանի սան Ջոհրայ Կարապետյանը ու Բ լսարանի սան Վահի Շահբազյանը։ Բանաստեղծությունը հանդես եկավ մանուկ լսարանի սան Գեորգյան Մակարյանը։ Ապա ճեմարանի երգչախումբը կատարողական հասուն վարպետությամբ երգեց «Արեգակն արդարութեան» շաբաթակն։ Եղիշին «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմի» գր-

բից հատված արտասանեց Անդրանիկ Հակոբյանը, իսկ Դավիթ Մարգարյանը մեծ ոգեւորությամբ կարդաց Դեռեղ Ալիշանի «Պլպլուն Ավարայի» բանաստեղծությունը։ Կոմիտասի «Շողեր Զանգ» ջութակով, դաշնամուրի նվագակցությամբ, կատարեց Արման Բեգարյանը, Էդիկ Հակոբյանն արտասանեց Ներսես Վանականի «Ոգով Վարդանանց» բանաստեղծությունը։

Ճեմարանականների պատրաստած ծրագիրն ավարտվեց երգչախմբի կատարմամբ՝ Մակար Եկմանյանի «Լուեց» երգով (մեմա-կատար՝ Հարություն Տերտերյան)։ Գեղարվեստական մասի ավարտին հետո բարձրաշնորհ Տ. Ներսես արքեպիս. Պողոսյանին օրհնության խոսք հղեց ներկաներին։

ՄԱՅՐ ԱԹՈՐԻ ՏՅԱՆՈՒՐԿԱՆԱՅԻ ՆԵՐՈՒՅՈՒՆ

Հայաստանյայց Եկեղեցին, սովորաբար համաձայն, Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14-ին՝ Քրիստոսի ծննդից 40 օր հետո։

Բարեպաշտական սովորություններից է Տյառնընդառաջի տոնի նախօրեին խառույկ վառելը։ Փետրվարի 13-ին՝ Տյառնընդառաջի նախատոնակից անմիջապես հետո, հանդիսավոր ժամերգության մասնակիցները շարժվեցին դեպի խառույկը։

Տոնակատարությունը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիս. Պողոսյանը, ճեմարանի տեսչությունը՝ գլխավորությամբ Տ. Հայկազուն Ժ. վրդ.

Նաջարյանի, միաբան հայեր, ճեմարանի սաներն ու շուրջ հարյուրից ավելի հյուրեր։

Խառույկ վառելից հետո ճեմարանի սաները ներկայացրեցին իրենց պատրաստած ծրագիրը։ Այն սկսվեց ճեմարանի օրհներգով, ապա երգչախումբը կատարեց «Ազնիվ ընկեր» եւ «Ձեյրունցիներ» երգերը։ Դրանց հաջորդեց Մոմիտասի երգերի շարքը՝ «Էս առուն ջուր ա գալիս», «Հոյ Նազան», «Ֆիզան յար», որն ընդմիջվում էր բանաստեղծությունների արտաստությամբ։

Տոնակատարությունը շարունակվեց մինչ ուշ երեկո, եւ կրակի վերջին բոցերի հետ ներկաները հեռացան հոգեճորտոգ ու բարձր ստորադրություններ։

ԳԱՄԱՆԱՍՈՒԹՅՈՒՆ՝ «ՅԱՅՍԱՆՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐԱԵՐԵՅԱԼ

Փետրվարի 18-ին՝ ժամը 10-ին, Գեորգյան հոգևոր ճեմարանի հանդիսությունների արահը հյուրընկալեց Հյուսիսային Կովկասի թեմական առաջնորդ Տ. Եզնիկ եպիս. Պետրոսյանին, որը մեմարանի տեսչի խնդրանքով այցելել էր դասախոսության, որի մյուսը «Յայսմատուրբն» էր։ Սրբազան հայրն սկսեց առաջին դարի քրիստոնյաներից՝ մանրամասն ներկայացնելով «Յայսմատուրբն» ստեղծման նախադրյալները։ Խոսվեց այն սկզբունքների մասին, որոնցով առաջնորդվել են հեղինակները «Յայսմատուրբ» ժողովածուն կազմելու ժամանակ։ Այնուհետեւ Տ. Եզնիկ եպիս. Պետրոսյանը խոսեց մեզ հասած ամենահին «Յայսմատուրբների» մասին, ներկայացրեց հայերեն ձեռագիր «Յայսմատուրբներն» ու դրանց խմբագրությունները։

Վերջում սրբազան հայրը պատասխանեց լսարանի հարցերին, որից հետո Տ. Հայկազուն Ժ. վրդ Նաջարյանը շնորհակալություն հայտնեց դասախոսին։

Հարմար ԿՈՍՏԱՆԴՆՆԱ

ԲՈՒՆԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԸԱՍԱԼԱՐԱՆՈՒՄ

Ժնե։ Օղակայան, 18 դեկտեմբերի 1998 թվական։ Օղակայանային աշխատակազմը եւ այդ օրվա ճամփորդող ուղեւորները զարմանքով եւ հեղաքրքրությամբ էին նայում անկյունում հավաքված մի խումբ երիտասարդներին։ Վերջիններս չափազանց հովված էին։ Տղաներից ոմանք փոքրում էին ծպուլալ եւ բաշալիկի մյուսաներին, աղջիկներից մի քանիսը լուր արարական էին։ Ոչ ոք չէր խոսում։ Նրանց կողքից անցնող անկյունագրյան ծառայության հերթապահներն ուշադրության էին գնում նրանց եւ փոքրում էին կոստիկ, թե ի՞նչն էր պարմադր։

«Դարձի՛ր դեպի Աստված եւ ուրախացի՛ր հույսի մեջ», այսպիսի խորագիր էր կրում 1998 թվականի աշնանային դասընթացը Բոսնի Էկումենիկ համալսարանում։ Սույն տողերիս հեղինակը բախտավոր առիթ է ունեցել մասնակցելու այդ կիսամյա շրջանին, եւ չնայած այնտեղ անցկացրած մեր կարճ ժամանակահատվածին, այժմ դժվար է ամփոփել այն ամենը, ինչին ակամատես եղանք համալսարանում։

Այս համալսարանը հիմնվել է 1946 թվականին՝ անմիջապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Դեռես դարակզմուն Առաջին աշխարհամարտի հետեւանքով ողջ աշխարհը ցնցված էր կատարված արհավիրքներից։ Եկեղեցիների առաջնորդները գիտակցել էին քրիստոնեական միության անհետաձգելի անհրաժեշտությունը։ Այս նպատակով մեծ գործունեություն կազմակերպվեց ժնեում՝ «Հավաք եւ եկեղեցական կարգ» կոչվող կոմիտեի կողմից։ Այստեղ հավաքվել էին մի քանի դավադրությունների ներկայացուցիչներ, որոնք փորձում էին մշակել քրիստոնեական միության վերականգնման ճանապարհները։ Երկրորդ աշխարհամարտը կասեցրեց նրանց գործունեությունը, բայց դրա հետ մեկտեղ եւս մեկ անգամ ապացուցեց միավորվելու անհրաժեշտությունը։

Այսպես, 1946 թվականին Շվեյցարիայում՝ Ժնեի վրդ 18 կն հեղափոխության վրա գտնվող Բոսն գյուղում, բացվեց Էկումենիկ համալսարանը, որը նախապես ծրագիր ուներ տարբեր երկրներից հրավիրելու աշխարհիկ անձանց՝ Էկումենիկական վերաբերյալ տարատեսակ գիտաժողովների եւ դասընթացների մասնակցելու համար։ 1948 թվականին համալսարանը համագործակցության մեջ է մտնում նորաստեղծ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ (ԵՀԽ)։ Տարիների ընթացքում համալսարանը մշակում է իր ուրույն կրթական ծրագիրը եւ համապատասխան ճանաչում ձեռք բերելու հետո կցվում է Ժնեի պետական համալսարանին։ 1960-ական թվականներից սկսած՝ այստեղ ուսման են հրավիրվում նաեւ ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիների հոգեւորականներ։

Յուրաքանչյուր ուսումնական տարեշրջան ստանում է իր հատուկ խորագիրը, որի ներքո կազմվում են դասընթացների թեմաները։ Այս տարի համալսարանը վերցրել էր ԵՀԽ-ի 8-րդ համագումարի նշանաբանը, եւ ըստ այնմ՝ սահմանվել էր դասախոսությունների ուղղությունը։ Հարկ է խոստովանել, որ դասընթացները շատ բարձր մակարդակով էին պատրաստված։ Նրանք պարունակում էին խորացված աստվածաբանություն (կաթոլիկ, ուղղափառ եւ բողոքական), աստվածաբանագիտություն, Ընդհանուր Եկեղեցու պատմություն, ժամանակակից հասարակագիտություն եւ համաշխարհային տնտեսագիտություն։ Դասախոսական անձնակազմը բաղկացած էր մեկ ուսման, ուղղափառ, կաթոլիկ, լութերական եւ երկու մեթոդիստ պրոֆեսորներից։ Ինչպես նաեւ յուրաքանչյուր շաբաթ հրավիրվում էին տարբեր դասախոսներ այլ կրթաշրջաններից։ Ուսանողության ընդհանուր թիվը 45 էր։ Նրանք եկել էին 36 տարբեր երկրներից եւ ներկայացնում էին 26 եկեղեցիներ։ Այս ուսումնական շրջանում ներկա էր 11 ուսանող՝ բուն Ուղղափառ եւ Արեւելյան Եկեղեցիներից, որից երեքն ազգությամբ հայ էր. Նեյի Վեբիյան՝ Բելյուրից, Վարդգես Մամուկյան՝ Սեւանի Վազգենյան դպ-

րանցից եւ եւ։

Ուսման ընթացքի բաղադրիչ մաս էին կազմում ընդհանուր դասախոսությունները, խմբակային ընթերցումները, լսարանային սեմինարները եւ միասնական ժամերգությունները։ Առաջին շաբաթների ընթացքում բոլորիս համար շատ հետաքրքիր էին տարբեր փորձառությունների տեղ մարդկանց հետ ժամոթանալը, նրանց հետ աստվածաբանական տարբեր հաստատվածների վերաբերյալ մեր մտածումները կիսելը, ինչպես նաեւ տարբեր Եկեղեցիների ավանդական հոգեւոր երգեցողությունն ունկնդրելը եւ նրանց ժամապաշտություններին ներկա գտնվելը։

Մակայն որոշ ժամանակ անց գաղափարական տարակարծություններ սկսեցին առաջանալ։ Ծառ հաճախ մենք մերժում էինք գամազան տե-



սակետներ, ինչպես օրինակ, ուղղափառ աստվածաբանության մոտեցմամբ՝ շատ խոր էին արդի լիբերալ մտածումները։ Այս տարածաշրջանում մենք առաջ եկան Աստվածաշնչի սերտողությունների ժամանակ, երբ մեզից յուրաքանչյուր փորձում էր կիրառել իր ավանդական մեկնաբանական եղանակը։ Ծառերն սկսեցին հուսախաբվել, որովհետեւ նրանք մեծ հույս ունեին հասնելու քրիստոնեական մեկ համընդհանուր գիտակցության։ Փաստորեն, գործնական կյանքը հակառակն էր ցույց տալիս։ Լսարանային բանավեճերն իրենց թեմայով պատճառում մեծապես ազդեցին արտադասարանական կյանքի վրա։ Ուսանողներն սկսեցին ավելի շատ մեկուսանալ իրենց սեռայնակներում։ Անգամ ժամերգությունների հաճախելիությունը խիստ ներպակ մկացվեց։ Այս տեսակ մթնոլորտում, թվում էր, բոլորն սպասում էին դասընթացի ավարտին, որպեսզի իրենց հարազատ օջախները վերադառնան։

Այս պատկերը տեսնելիս ակամայից վերհիշում էինք քրիստոնեական պատմության 2000-ամյա ընթացքը, որը հայտնի է իր վիճարկություններով եւ բաժանումներով։ Անձամբ եւս վստահ չէի, որ մեր համալսարանում հնարավոր կլինի լուծել այդ բոլոր «պատմական ընդհարումները» եւ վերականգնել իրական քրիստոնեական միությունը։ Սակայն շատ դժվար է հավատալ, թե ինչ պատահեց այդ ամենից հետո։ Ծառերը պիտի անհավանական կարծեմ դա, բայց իրականում ակամատես եղանք մի գեղեցիկ հրաշք... Մենք շարունակեցինք միասին ապրել, շարունակեցինք գիշերել միեւնույն ուսանողական մասնաշներում, սովորել միեւնույն դասարաններում, աղոթել միեւնույն մթնոլորտում, հերթապահել միեւնույն խոհանոցում... Եւ ահա մի օր բոլորս գիտակցեցինք, թե որքան մեծ ենք կապվել իրար։ Անհավատալի է, բայց ողջ ուսանողությունը մի մեծ ընտանիք էր դարձել, եւ բոլորը խոստովանում էին, որ այստեղ ամենամանկեղծ եղբայրությունն էր տիրում։

Դժվար է բացատրել, թե ինչպես դա պատահեց։ Վստահաբար՝ դրանում աստվածային նախախնամություն կար, եւ նաեւ ինչ-որ չափով՝ համալսարանի տեսչության Էկումենիկ հմտությունը։

Ժնե։ Օղակայան, 18 դեկտեմբերի 1998 թվական։ Օղակայանային աշխատակազմը եւ այդ օրվա ճամփորդող ուղեւորները զարմանքով եւ հետաքրքրությամբ էին նայում անկյունում հավաքված մի խումբ երիտասարդներին...

Հարություն ասրիակազ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱ

ԿՐՈՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԼՍԱՐԱՆ՝ ՆԱԵԻ ԹԱԼԻՆՈՒՄ

Արագածոտնի բնիկ բարեխնամ առաջնորդ Ս. Նավասարդ եպս. Կոնյանի եւ բնական խորհրդի նախաձեռնությամբ՝ սույն բլի մարտի 4-ին տեւական աշխատանքներից հետո Թալին քաղաքում բացվեց քրիստոնեական կրոն դասավանդող ուսուցիչների պատրաստման լսարան: Լսարանին անդամագրվելու համար դիմել էր տարածաշրջանի ավելի քան 40 մանկավարժ: Բացմանը ներկա էին Ս. Էջմիածնի ԲԳԲԿ-ի վարիչ-տնօրեն Ս. Վազգեն վրդ. Միդախյանյանը, Արագածոտնի ԲԳԿ-ի պատասխանատու Ս. Հայկազուն քահանա Մկրտչյանը,

Հովհաննես քեն. Հովհաննիսյանը: Նա նշեց, որ Թալինի գործող եկեղեցին առավելագույն կնպաստի լսարանի անդամների հոգեւոր կյանքի ձեւավորմանը եւ հույս հայտնեց, որ ուսուցիչների ապագա գործունեության շնորհիվ հավատացյալ խումբներում բազմությամբ կլցվեն թե՛ Թալինի եւ թե՛ շրջակա եկեղեցիները:

Դիմողներին շնորհավորեց նաեւ Ս. Վազգեն վրդ. Միդախյանյանը: Նա, ներկայացնելով Ս. Էջմիածնի ԲԳԲԿ-ի գործունեությունը, ընդգծեց Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ ուշադրությունը հայ մանկան հոգեւոր դաստիարակությանը եւ Վեհափառ Հայրապետի մեծ ներդրումը Հայաստանում քրիստոնեական կրթության եւ բարոգություն գործունեությանը:



Թալինի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Ս. Հովհաննես քահանա Հովհաննիսյանը:

Բացման խնդիրը հանդես եկավ Ս. Հայկազուն քահանա Մկրտչյանը: Նա փոխանցեց Արագածոտնի բնիկ առաջնորդ գերաշնորհ Ս. Նավասարդ եպս. Կոնյանի օրհնության խոսքը: Ի մասնավորի՝ սրբազան հայրը շնորհավորում էր նորակազմ լսարանի անդամներին, մարդուն ուսման հաջող ընթացք, իր սպասումներն արտահայտում լսարանի ապագա հաջող գործունեության վերաբերյալ եւ արդյունքում, որ Աստծու օրհնությամբ ընթանա այս բարի ձեռնարկումը: Այնուհետեւ Ս. Հայկազուն քեն. Մկրտչյանը բեմակալ առաջնորդի անունից շնորհակալություն հայտնեց Թալինի քաղաքապետարանին ու քաղաքապետին, նաեւ մարզային կրթության բաժնի ղեկավարությանը՝ եկեղեցական այս նվիրական գործին աջակցելու համար:

Ընդդիմադրանքի եւ օրհնության խոսք սառց տեղի հոգեւոր հովիվ Ս.

տեղեկացրեց, որ կուսուցանվեն հետեւյալ առարկաները՝ Հին եւ Նոր Կտակարաններ, Հայ եկեղեցու պատմություն, Հայ եկեղեցու տոներ, քրիստոնեական եւ Հայ եկեղեցու ծես: Դասերը տեղի կունենան շաբաթը մեկ անգամ՝ երկու դասալսությանը: Դասընթացը կտեղի երկուսուկես ուս. տարի: Կղասավանդեն թե՛ Ս. Էջմիածնի միաբանները եւ թե՛ Արագածոտնի բնիկ հոգեւոր սպասավորները: ԲԳԲԿ-ի տնօրինությունը ստանձնեց լսարանի անդամներին հոգեւոր գրականությանը ապահովելու եւ ունեցողների երթևեկությանը ծախսերը հոգալու խնդիրը:

Վերջում դիմողներն իրենց հետաքրքրող հարցերով դիմեցին ներկա հոգեւորականներին եւ ստացան բավարար պատասխաններ: Բաժանվեցին ԲԳԲԿ-ի պատրաստած խորհուրդները սուրբագրերը: Միջոցառումն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով եւ միաձայնարար արտահայտված «Հայր մերով»:

ԲԳԲԿ-ի լսարանական բաժին

ԿՐՈՆԻ ԴԱՍԱՐԵԹԱՅՆՔՐ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ԳՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Բոլորովին վերջերս Մյունխեն բնիկ առաջնորդարանի եւ Վայոց ձորի կրթության բաժնի օժանդակությամբ հնարավորություն ստեղծվեց ուսումնական տարվա երկրորդ կեսից կրոնի դասընթացներ անցկացնել մարզի դպրոցներում: Այդ աշխատանքների իրականացմանը լծվեցին մի շարք ուսուցիչներ, որոնք հաջողությամբ անցել են մարզկենտրոնում Մյունխեն քենի եւ ԲԳԲԿ-ի կողմից կազմակերպված դասընթացները:

Որքան էլ դժվար լինեմ սկզբնական շրջանի կազմակերպչական աշխատանքները, այնուամենայնիվ գործընթացը սկսվել է: Դրանցից է Մարտիրոս գյուղի միջնակարգ դպրոցը: Այստեղ դեռեւս սեպտեմբերից սկսվել են դասընթացները, որոնք անցկացվում են գործող եկեղեցու մեծ մասրահում: Դասընթացներին մասնակցում են բոլոր ցանկացողները, նույնիսկ՝ ծնողները: Դասընթացն անցկացնող դպրո-

ցի տնօրեն Թ. Հակոբյանը, որն, ի դեպ, ԲԳԲԿ-ի ունկնդիր է, ջանք չի խնայում աշակերտներին ճիշտ պատկերացում տալու Հայոց. Առաքելական եկեղեցու պատմությանը, դավանաբանության մասին: Ունկնդիրների միջոցով կազմակերպվում են նաեւ առանձին ելույթներ, բատերականացված ներկայացումներ, նրանք մասնակցում են կրոնական արարողություններին: Դասընթացներն ակտիվացնելու համար անդրաժեշտ գրականությանը որոշ քանակությամբ ձեռք է բերված: Աշակերտները սիրով են սերտում, առօրյա գործերում իրագործում, գերծ մնում տարբեր արարողակարգային պատկերացումներից, ապրում քրիստոնեական առաքինությունը:

Մարտիրոսի դպրոցի փորձը բոլոր օրինակ մտառայի բոլոր նրանց համար, ովքեր դեռ մտառումների մեջ են եւ դեռ քերականա-վատ են իրենց ուժերի նկատմամբ:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔՆԵՐ

Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ Խորհրդային կենտրոնի հրատարակել է փոքրիկ աղոթագիր: «Ամենօրյա աղոթքներ» խորագրով: Վերջում գեղեցկված են նաեւ եկեղեցածիական բառազանգի առավել գործածական նմուշները: Նման հրատարակության կարիքը վաղուց էր զգացվում, եւ ուրախակի է, որ ԲԳԲԿ-ն դառնալով կերպարավորված է ժողովրդի ցանկություններին:

ՏԵՐՈՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հայր մեր, ու յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեցեց արհայություն Քո, եղիցին կամ Քո որդեք յերկինս եւ յերկի: Չհաց մեր համադազորդ տուր մեզ այսօր եւ թող մեզ գոյարիս մեր, որդեք եւ մեք թողումք մերոց յարադարանաց: Եւ մի՛ ճանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարեք, զի Քո է արհայություն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամեն:

ԱՂԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔ

Ձեմ գոհանամք, Տէր Ասուած մեր, որ ժողովեցեք մեզ համգիս մոյ խաղաղութեամբ: Տո՛ւր մեզ, Տէր, գառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել, ամեն:

Լո՛յս եծմարիս Քրիստոս, որ լուսաւորես զամենայն մարդ, լուսաւորես՝ զիս զխաւաքելու մեղքով. բաց զաչս իմոյ եւ հաստատեա՛ յերկիւն եւ ի սէր յառաջիկայ մեզ: ամեն:

ՍՈՒՐԲ ԵԿԵՆԵՑՈՒ ԴՈՒՆ ԱՂԱՏ

Առ դրան սրբոյ Եկեղեցւոյս եւ առաջի Ասուածընկալ եւ յայծառացեալ սուրբ Յովնայ խոնարհեալ երկիւղիւ երկիր-դազանմեք. զսուրբ եւ զհրաշակի եւ զյաղթող Տէրութիւնդ Քո օրհնեմք եւ փառաւորեմք, եւ Քեզ մասնացանձ գօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդոյ եւ Հօգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտեանց. ամեն:

ԵԿԵՆԵՑԻ ՄՏՆԵԼԻՍ

Տաճա՛ր Ասուծոյ եւ բնակարան Հօգւոյն Սրբոյ, ո՛ր ի քեզ սուրբ առաքանան կոչեց յորդգրութիւն Հօրն երկնաւորի: Այսօր ի քեզ կանգեալ յառաքանք Գառն ա՛մարան, եւ ի դիմեալ եկի ա՛մ դուրս քո եւ աղաչեմ զքեզ. մա՛րմ զիս վերսիմ լուսցմամբ եւ սրբեա՛լ ի մերցալ եւ արա՛ արժանի մասնի առաջի սրբոյ Սեղանոյդ յերկրագութիւն. ամեն:

ԵԿԵՆԵՑՈՒՑ ԴՈՒՐՍ ՎԱԼԻՍ

Թագաւոր երկնաւոր, գեկեղեցի Քո անաւորդ յաւիտեւ եւ գերկրայա՛ գուս ամուրանք Քում յաւիտեա՛լ ի խաղաղութեան. ամեն:

ԱՂՈԹՔ ԵՐԵՆԱՆԵՐԻ

Ո՛վ մեծ Աստված, որ զվել ես մեզ բարի հայր եւ սիրող մայր, տուր մեզ ժողովրդ, անմեք աղոթք, չլիմեք անհոգ, արեմք ինքող, յիշեմք ու հեզ ու սիրեմք Քեզ. ամեն:

ՃԱՆԱԳՐԱՅ ԳԱՆՈՒՑ ԱՂԱՏ

Տէր, ուղղեա՛ զգմացս մեր ի ճա՛նադարիս խաղաղութեան.



ՄԱՐԵՆՈՐԱՅ ԱՂՈԹՔՆԵՐ

Տէր, ուղղեա՛ եւ առաջնորդեա՛ հոգեւ մերոց եւ ամենայն հաւաճեցեցե՛ղ զմա՛յ ի ճանադարիս խաղաղութեան եւ ի կեանս արդարութեան եւ ի կեանս յաւիտեանց. ամեն:

ԳՈՐԾՆ ՍԿԱՆԵԼՈՒՑ ԱՂԱՏ

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛ ի մեզ, Տէր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ:

Ուսո՛ զիս, Տէր, առնել զարդարութիւն, խոսիլ զօգնարարութիւն, սիրել զսրբութիւն եւ ասել զաղօթութիւն, խոսիլ ի չարեաց եւ զմա՛յ ի ճանադարիս բարեաց. ամեն:

ԴԱՆԱՍԿԱՆՈՒՅԱՆ ԱՂԱՏ

Իմաստութիւն Հօր Յիսուս, տո՛ւր իմն զիմաստութիւն գարիս խորհիլ եւ խօսիլ եւ զօրծել առաջի Քո յամենայն ժամ. ի չար խորհրդոյ ի բանից եւ ի գործոց փրկեա՛ զիս. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ իմն՝ բազմամեղիս. ամեն:

ՃԱՆԵՑ ԱՂԱՏ

Ճառակեցեցե՛ղ խաղաղութեամբ գերկալուս, որ յառաջեալ է մեզ ի Տեառնք. Օրհնեալ է Տէր ի յարգես իւր. ամեն:

ՃԱՆԵՑ ՅԵՏՈ

Հիւրութիւն ի վերայ սեղանոյս անձիս եւ անճուղազ արագեց Քրիստոս Ասուած մեր, որ զմեզ կերակրեաց եւ լիացեց. Նմա փառք յաւիտեանս. ամեն:

Փառք կերակրողին սիեզերաց, որ զմեզ կերակրեաց եւ լիացցոյց. Նմա փառք յաւիտեանս. ամեն:

ՆԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

Օգնեա՛ մեզ, Տէր, օգնեա՛ մեզ, Ասուած փրկիչ մեր, վասն մեծի փառաց անուանդ Քո. Տէր, փրկեա՛ զմեզ եւ փառե՛ զմեզ մեր վասն անուան Քոյ սրբոյ: Պարտեա՛ յաւիտեալ զառ ի Քեզ գաւառիկեալ եւ զյուսեալ ժողովուրդս Քո ընդ հովանեալս արեւ եւ յաղաղութեան: Փրկեա՛ յերեւելի եւ յաւերելոյ թեմանոյն: Արժանաւոր գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Հօր եւ ընդ Սրբոյ Հօգւոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտեանց. ամեն:

ԴԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Եկ, Տէր, ի սեսութիւն հիւանդացեալ հոգւոյ իմոյ, դի՛ր զմեզ Քո ի վերայ իմ եւ բժեկեա՛ ասելով. «Զօրացի՛ր, ա՛ռ զմահիւն քո եւ երթ ի ճանադարիս կեանաց արդարութեան». ամեն:

Փարաւեա՛ զգուս եւ բժեկեա՛ զհիւանդութիւնս ի ժողովրդեմ Քում, Տէր Ասուած մեր, եւ ժողութեա՛ ամենեցուն զկաւաքելալ առողջութիւն ճանաւ ամենայնոց յաւիտ Քո, որով բարձր գեկարութիւն ազգի մարդկան եւ դասա-

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Հաւատքի չափ, եւ թերեւ Հաւատք ալ ասելի գործարք եղած է Յոյսի վրայ համոզումս, այն Յոյսը որ աստուածային նախախնամութեան եւ Հովանաւորութեան սկզբունքը կ'ազդէ մարդուն: Այդ ազդեցութեամբ է որ աւ Ասուած դիմումը եւ հայրատը, կամ սովորական բառով աղօթքը, անկեղծութեամբ եւ համոզմամբ կիրարկած են ամեն զարգացիւն: Ամեն գործի սկզբին կամ ընթացքին, ամեն դժուարութեանց առթիւ, ամեն նեղութեանց մեջ, ամեն ծախքութեանց հանդերձ, աւ Ասուած դիմումը հաստատուն սովորութիւն են դարձ յաջանալիս ճարճի եւ վեր:

Մաղաքիա Դաւիթբեկ ՕՐԱՄԱՆԵԱՆ

Դաւիթբեկ զգեմամին կեանաց եւ փրկութեան մերոյ: Դու ես կեանք մեր եւ փրկութիւն, բարեբա՛ր եւ բազմունդորդ Ասուած, որ մայն կարող ես բոլոր զմեզս եւ մերծել զայսս եւ զհիւանդութիւնս ի մեզ, որում յայնքի եւ դէպքի կարեաց մերոց, զարգեալի՛ք բարեաց, զարգեալի՛ք զառաւ որդունութիւն Քո ի վերայ արարածոց Քոց ըստ իւրաքանչիւր յոյսոյից, յորոց հաւատալով փառաւորեալ զօրիկ Ամենասուրբ Երրորդութիւնը, այժմ եւ միշտ եւ յաւիտեան յաւիտեանց. ամեն:

ԱՆՆԱԿԱՍՈՒԹՅԱՆ ԵՒ ԿԱՆԱԿ ԴԵՂՔՈՒՄ

Խնամա՛ղ արարածոց, յաւիտեա՛ն անա՛ղ Խաչի Քո գոհող եւ զմարմին իմ ի յառաջանաց մեղաց, ի փորձութեանց դիպեալ եւ մարդոց անիրաւաց, եւ յամենայն վստահից հոգւոյ եւ մարմնոյ, եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ իմն՝ բազմամեղիս. ամեն:

ՔԵՆԵԼՈՒՑ ԱՂԱՏ

Պահապա՛ր ամենայնի Քրիստոս, այդ Քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուր եւ ի գիտեմք, ի մաշիլ ի ճան, ի զմա՛յ ի ճանադարիս, ի մեղքեւ ի յայտնել, զի մի՛ երբէք սասանեցայց. եւ ողորմեա՛ Քո արարածոց եւ իմն՝ բազմամեղիս. ամեն:

Մարդասէ՛ր Ասուած, զառաջիկայ գիտեա՛ր, որ ի վերայ մեր գալուց է, ի մեղաց փրկեա՛, ի չարեաց ազատեա՛ եւ ի գործս բարիս առաջնորդեա՛. ամեն:

ԱՂԱՎԻՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻՆ

Խաչ Քո եղիցի մեզ աղաւթն, Տէր Հիսուս, յորմա՛ն երեւիս փառոք Հօր ընդ ամոյս լուսաւորեալ: Յայնժամ մեք մի՛ ամաչեցուց յուսացեալս ի Քեզ, այլ զօրութեամբ Քով մեծեալ բերկրեցուց ընդ աշնէ Քում, որովք զորդիս լուսոյ եւ ողիս տուրմեան. ամեն:

ՀԱՎԱՅԵԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաւատեա՛մ յԱմենասուրբ Երրորդութիւն, ի Հայր եւ յՈրդի եւ ի Սուրբ Հօգիւն: Զաւեստեմք Գաբրիէլի, զԾնունդն Քրիստոսի, զԱրարութիւնն, զԳառաւանս, զԿաշխութիւնն, զԳաղութիւնն երեւոյթեալ, զՅարութիւնն, զԱստուածաղթն Հայրաւորման, զԱստուածաճա՛ր ճանադարման, զԱստուածաճա՛ր ճանադարման, զԱստուածաճա՛ր ճանադարման, զԱստուածաճա՛ր ճանադարման, զԱստուածաճա՛ր ճանադարման. ամեն:

ՈՂԱՌԵՆ ՍՈՒՐԲ ԾՆԱԴՅԱՆ

- Քրիստոս ծնալ եւ յայնժեան: - Օրհնեալ է յայնժեան Քրիստոս:

ՈՂԱՌԵՆ ՍՈՒՐԲ ԶԱՍԿԻ

- Քրիստոս յարեալ ի մեղեցոյ: - Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

**ԶԱՎԱԿՆԵՐԸ ՄՈՐ ՄՈՏ ԵՆ ԳՆՈՒՄ, ԻՍԿ ՄԵՆՔ ՓՆՏՐՈ՞ՒՄ ԵՆՔ
ՄԵՐ ՄՈՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՈՒՆ**

